Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2

16.02.2023թ.-ին կնքված թիվ PDU-216-02-23
Փոստային կապի ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան 03.03.**2023 թ.**

«ՀԱՅՓՈՍ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ՝ «Կատարող»)՝ ի դեմս Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Արայիկ Աբրահամյանի և ՀՀ Ոստիկանությունը (այսուհետ «Պատվիրատու»)՝ ի դեմս ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Արամ Հովհաննիսյանի, մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) պայմանագիրը հետևյալի մասին.

Սույն համաձայնագրով կողմերը համաձայնության եկան և հաստատեցին 16.02.2023թ.-ին կնքված թիվ PDU-216-02-23 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 2.3.1 կետը «սակագներին համապատասխան» բառերից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Սույն պայմանագրի պարտավորությունների կատարումը սահմանվում է ըստ ստորաբաժանումների՝ ՀՀ Ոստիկանության կենտրոնական ապարատի, ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային Ոստիկանություն» Ծառայության, ՀՀ Ոստիկանության Անձնագրային և Վիզաների Վարչության, ՀՀ Ոստիկանության Պետական Պահպանության Գլխավոր Վարչություն: Յուրաքանչյուր ստորաբաժանումն իր մասով պարտավորվում է ներկայացնել գնման պայմանագրի համաձայնագիրը (համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 7-ին, 8-ին, 9-ին, 10-ին համապատասխան), հստակ նշելով համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը, ինչպես նաև ներկայացնել պայմանագրի կնքման անբաժանելի մաս կազմող գնման հայտերը և համադրության եղանակով ստուգել Ընկերության կողմից մատուցված փոստային ծառայությունների վերաբերյալ ստացված փոխադարձ ակտերը կամ քաղվածքները»:

2. Պայմանագրի 3.5 կետը «սահմանված կարգով» բառերից հետո լրացնել հետյալ նախադասությամբ.

«Սույն պայմանագրով նախատեսված ունիվերսալ փոստային կապի ծառայությունը ենթակա է մատուցման , եթե փոստային առաքանու վրա փակցված է համապատասխան նամականիշ, կամ Ընկերության կողմից հաստատված առաքանու դիմաց վճարումը հավաստող այլ նիշերով, այդ թվում՝ Ընկերության կողմից շահագործվող էլեկտրոնային համակարգի արտատիպերը («Հասույթը գանձված է» արտատիպը, համապատասխան ալգորիթմով տպագրվող գծիկավոր կոդը կամ QR կոդը) առաքանու ծրարի (փաթեթավորման) վրա տպագրելու կամ փակցնելու միջոցները կիրառելով և տվյալ առաքանին ընդունվել է Ընկերության կողմից»:

3. Պայմանագրի 3.8 կետը «արտահանված քաղվածք» բառերից հետո լրացնել «համաձայն Հավելված 7-ի»
4. Պայմանագրի 6.6 կետում սահմանված «պահվում են 30 (երեսուն) օր» բառերը փոխարինել «պահվում են 14 (տասնչորս) օր» բառերով:

5. Պայմանագրի 6.7 կետում սահմանված 6.7 «Երեսնօրյա ժամկետում» բառերը փոխարինել «տասնչորսօրյա ժամկետում» բառերով
6. Պայմանագրի թիվ 3 Հավելվածը լրացնել 7-րդ կետով հետևյալ խմբագրությամբ.

«7. Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով փոստային ծառայությունների համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Ընկերությունը կազմում և Հաճախորդին է ներկայացնում հաշվետու ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների վերաբերյալ քաղվածք՝ համաձայն Հավելված 6.1-ի, որոնք պարտադիր պետք է լինեն ստորագրված և կնիքված կամ էլեկտրոնային ստորագրված: Մատուցված ծառայությունների վերաբերյալ փոխհաշվարկի ակտը կազմվում է հաշվետու ամսվա ընթացքում Ընկերության և Հաճախորդի միջև ստորագրված առաքանիների հանձնման-ընդունման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի, ինչպես նաև ծառայությունների մատուցման վերաբերյալ այլ սկզբնական հաշվապահական փաստաթղթերի (այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթերի) հիման վրա: Փոխհաշվարկի ակտի հաստատումից հետո 5-րդ աշխատանքային օրը Ընկերությունը կազմում և Հաճախորդին է ներկայացնում ծառայությունների մատուցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան հաշվարկային փաստաթուղթ (հարկային հաշիվ»):

7. Պայմանագրը լրացնել թիվ 7 Հավելվածով հետևյալ խմբագրությամբ.

«Հավելված 7
«Հայփոստ» ՓԲԸ-ի և -ի միջև
.2023թ.-ին կնքված թիվ PDU----------
Փոստային ծառայությունների մատուցման պայմանագրի

Քաղվածք {0} դրությամբ

Հաճախորդ
{0}
{0}
{0}
{0}

Ներհանրապետական/ միջազգային	Ծառայություն	Տեսակ	Քաշ	Պատվիրված հետ ծանուցմամբ	10+	Գին	Կարգավիճակ	Ստեղծման ամսաթիվ	Առաքման հասցե
	Ընդամենը					ՀՀ դրամ			

8. Այլ պայմաններ

8.1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

8.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
8.3. Սույն Համաձայնագիրը կազմված է / 3 / էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:
8.4. Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, 0002, Սարյան 22
ՀՎՀՀ: 02507464
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ: 1930003703156000
Հեռ.: /010/ 514-548

Գլխավոր գործադիր տնօրեն՝
Արայիկ Աբրահամյան

/ստորագրություն/

Պատվիրատու՝

ՀՀ ոստիկանություն
ք.Երևան, 0025, Նալբանդյան 130
ՀՎՀՀ: 01533334, 01840082, 01569613, 01506025
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ: 900011021947, 900011024321, 900011023554, 900031814016
Հեռ.: /010/ 596-021

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին գործերի
նախարարի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր
Սիրամ Հովհաննիսյան

/ստորագրություն/